շարքերը, Արշալույս Աստուածատրեանը, Սահակ Թորոսեանը, իբրև նահանգական կոմիսար, Հ. Զինու. Միութեան ներկայացուցիչը և Արամը ի պաշտօնէ։ Ցատուկ Կոմիտէի նախագահ ընտրուեց Մ. Մուսինեանը, քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Սարգ. Օհանջանեանը։ Ցատուկ Կոմիտէն դարձաւ Երևանի փաստական իշխանութիւնը։

Ցատուկ Կոմիտէի, ինչպէս և նրա հետ համերաշխ գործող զինուորական կոմիսար Դրօի ու Երևանի նահանգի հայկական զօրքերի ընդհանուր հրամանատար զօր. Սիլիկեանի գլխաւոր մտահոգութիւնը ռազմաճակատի ամրացումն ու թիկունքի անդորրութեան պահպանումն էր։ Այդ նպատակով, հէնց առաջին նիստում, Ցատուկ Կոմիտէն որոշեց զէնքի տակ առնել մինչև 28 տարեկան բոլոր զինապարտներին։ Այդ իմաստով Արամը գրեց մի կոչ, որ եղաւ Ցատուկ Կոմիտէի № 1 կոչը։ Նրա մէջ բացատրւում էր կացութեան լրջութիւնը և, յանուն Ազգ. Խորհրդի, հրաւէր ուղղւում զինապարտներին՝ երեք օրւայ պաշարով ներկայանալ տեղական զինուորական կենտրոնները։ Ժողովուրդը արտակարգ վստահութեամբ արձագանգ տուեց իրեն ուղղած կոչին, և, հակառակ ծննդեան տօներին, ամենքը շտապեցին ներկայանալ պատշաճ իշխանութեան։

Միաժամանակ, Ցատուկ Կոմիտէն կազմակերպում էր թիկունքը, աշխատում էր ապահովել ճանապարհների և հաղորդակցութեան միջոցները, ինչպէս նաև կարգադրել ինքնապաշտպանութեան գործը։ Այս նպատակով կազմւում և որոշ վայրերում դասաւորւում էին մարտական խմբեր ու ռազմամթերք և ջանք էր թափւում, խաղաղ միջոցներով, առաջն առնելու հանրային անդորրութեան խանգարման։ Այս տեսակէտից, խոշոր նշանակութիւն էր տրւում հայ և թուրք ղեկավարների համերաշխութեան և հարեւան երկու ժողովուրդների խաղաղ կենակցութեան։ Թէ՛ Ցատուկ Կոմիտէի, թէ՛ նահանգական կոմիսարի և թէ զինու. կոմիսարի գործունէութիւնը զարգանում էր այդ ուղղութեամբ, մի բան, որ շատ էր դժւար ա՛յն ժամանակւայ պայմաններում։

Հեշտ չէր և ռազմաճակատի պաշտպանութեան և հայկական զօրամասերի կազմակերպութեան ու առողջացման գործը։ Դեռ Դրօն նոր էր նշանակւած հայկական զօրքերի կոմիսար, երբ ճակատի հայկական զօրամասերից սկսան Թիֆլիս հասնել պատւիրակներ՝ խնդրելու, որ իրենց մասերը յետ քաշեն թիկունք. չէին ուզում մնալ առաջաւոր դիրքերում։ Զօրամասերի ներկայացուցիչները իրենց պահանջը պատճառաբանում էին նախ՝ ընդհանուր բարոյալքումով և երկրորդ նրանով, որ միայն հայկական ուժերով անհնար է պաշտպանել ռուս բանակի թողած ընդարձակ ճակատը։ Եւ, իրօք, նրանց ասածի մէջ կար որոշ իմաստ. հայկական ռազմաճակատը այդ օրերին երկարում էր Սև ծովից մինչև Վասպուրական, որի վրա 1917թ. վերջերին, կանգնած էին 200,000 հետեւակ զինուորներ և 30 գունդ ձիաւոր՝ համապատասխան հրետանիով և մօտ 120,000 հոգինոց թիկունքային մասերով։ Այդ ուժերը այժմ պէտք է փոխարինւէին հայկական վտիտ մասերով։